Հավելված 6
ՀՀ Տավուշի մարզպետի
" 15 " մարտի 2023 թ. թիվ 55 որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի (այսուհետ՝ մարզպետի աշխատակազմ) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչությունը (այսուհետ՝ վարչություն) կառուցվածքային հիմնական մասնագիտական ստորաբաժանում է:
2.Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Աշխատակազմի կանոնադրությամբ, Մարզպետի որոշումներով, սույն կանոնադրությամբ, Աշխատակազմի գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում (փոփոխում) է Մարզպետը:
4.Վարչությունը վերակազմավորում և նրա գործունեությունը դադարեցնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

5.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ

1. Վարչության խնդիրն է գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:
2.Մարզի գյուղատնտեսության ոլորտի վերաբերյալ իրականացվող ծրագրերի գործընթացի կազմակերպում և աջակցում:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության գործառույթներն են.
   1) Մասնակցում է գյուղատնտեսության ոլորտի պետական կառավարման մարմնի, միջազգային կազմակերպությունների կողմից մարզում իրականացվելիք ծրագրերի նախագծերի քննարկմանը, աջակցում է գյուղատնտեսության ոլորտում ՀՀ պետական օժանդակության, հասարակական, մասնավոր, ներդրող և արտասահմանյան դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի գործընթացին:
   2) մասնակցում է համայնքներում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների և վնասատուների, մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքներին, իրականացում է կարանտինային պահանջների կատարման և ագրոկանոնների պահպանմանն ուղղված

միջոցառումների ուսումնասիրություններ ու վերլուծություններ, արդյունքների ամփոփում և համապատասխան առաջարկությունների ներկայացում և համակարգում.համագործակցում է պետական լիազորված մարմնի և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

3) մարզի տարածքի տնկարաններում, սերմնաբուծական կազմակերպություններում ուսումնասիրությունների ու վերլուծությունների իրականացում, դրանց արդյունքների ամփոփում և համապատասխան առաջարկությունների ներկայացում ու համակարգում:
4) գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնաբուծության նպատակային ծրագրերի և դրանց տեղայնացման մեխանիզմների մշակումը և առաջարկությունների ներկայացում.:
5) մարզի գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, ագրարային ոլորտի տնտեսավարող այլ սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում մասնագիտական և խորհրդատվական աջակցության ցուցաբերում:
6) աջակցում է մարզի տարածքում անասնաբուժական ծառայություններին և սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին հակահամաճարակային կանխարգելիչ և հարկադիր միջոցառումների իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնելիս:
7) տոհմաբուծական տնտեսությունների և արհեստական սերմնավորում իրականացնող կազմակերպությունների գործունեության աջակցության ցուցաբերում
8) համայնքներում անասնագլխաքանակի հաշվառման և համարակալման աշխատանքների համակարգում և կազմակերպում:
9) կազմակերպում և մասնակցում է համայնքներում բնական աղետների հետևանքով առաջացած խնդիրների (կարկտահարություն, ուժեղ քամիներ, ջրհեղեղ, սելավներ,երաշտ և այլն) ուսումնասիրության, հաշվառման և համապատասխան մարմիներին ներկայացմանը:
10) մարզի համայնքներում պարարտանյութերի, դիզելային վառելիքի, սերմացուների պահանջարկի ուսումնասիրության գործընթացի կազմակերպում, աջակցություն գարնանացանի, աշնանացանի և բերքահավաքի աշխատանքներին, տեղեկատվության հավաքագրում ու համապատասխան մարմիներին ներկայացում:
11) համակարգում և հսկողություն է իրականացնում ոռոգման ջրամատակարարման կազմակերպությունների գործունեության նկատմամբ, մարզային նշանակության ոռոգման ջրամատակարարման ցանցերի կառուցման, պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ, միջոցներ ձեռնարկում հանրապետական նշանակության ոռոգման համակարգերի նպատակային շահագործման ուղղությամբ:
12) աջակցում և հսկողություն է իրականացնում ոռոգման ջրամատակարարման վարձավճարների հավաքագրման նկատմամբ:
13) Մասնակցում է բնության և շրջակա միջավայրի պահպանության պետական ծրագրերի մշակմանը և իր լիազորությունների շրջանակներում ապահովում է դրանց իրականացումը մարզի տարածքում:

14) Մարզի տարածքում վերահսկում է շրջակա միջավայրի պահպանության օրենսդրության կատարումը և խախտման փաստերի վերաբերյալ տեղյակ է պահում համապատասխան մարմիններին:
15) Աջակցում է հատուկ պահպանվող գոտիների պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը:
16) Համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ;
17) Մասնակցում է բնության հատուկ պահպանվող տարածքներին և անտառտնտեսություններին առնչվող պետական ծրագրերի և կառավարման պլանների մշակմանը:
18) Աջակցում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն իրականացնող ծառայություններին:
19) Աջակցում է մարզի տարածքում բնական պաշարներ օգտագործող օբյեկտների և սուբյեկտների գործունեության համակարգումը և տեղեկատվության ներկայացումը
20)Համակարգում է մարզի անտառային տարածքներում հակահրդեհային միջոցառումների իրականացման աշխատանքները:
21) Աջակցում է անտառների և անտառատնկարկների պահպանությանն ու օգտագործմանը
22) Բուսական աշխարհի պահպանության և արտադրության նպատակով միջոցառումների իրականացում՝ համաձայնեցնելով այդ բնագավառում լիազորված մարմնի հետ
23) Մասնակցում է պետական ծրագրերի մշակմանն ու իրենց իրավասության սահմաններում դրանց իրականացմանը:
24) Աջակցում է կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառում համապատասխան պետական մարմինների տարածքային ծառայությունների գործունեությանը:
25) Աջակցում է բնության հատուկ պահպանվող տարածքների /պետական արգելոցներ, ազգային պարկեր, պետական արգելավայրեր, բնության հուշարձաններ/, ինչպես նաև բուսաբանական և դենդրոպարկերի պահպանությանը և օգտագործմանը, որսագողության, ապօրինի ձկնորսության դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը:
26) Ներգրավում է մարզի վարչական տարածքներում անտառային հրդեհների մարման աշխատանքներին մասնագիտացված ծառայություններին, անտառօգտագործողներին և բնակչությանը:
27) Աջակցում է պետական ծրագրեր՝ անտառների և անտառային հողերի պահպանության և օգտագործման նպատակով:
28) Համակարգում է վերահսկողություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերի բերրիության, հողի այլ օգտակար հատկությունների պահպանման, բարելավման և արդյունավետ օգտագործման գործընթացի նկատմամբ:

29) Համակարգում է վերահսկողություն համայնքային սեփականություն հանդիսացող հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման գործընթացի նկատմամբ:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը իր գործունեությունն իրականացնում է Մարզպետի կողմից հաստատված հաստիքացուցակով:

7.Վարչության պետը հիմնական հաշվետու է մարզպետին:

8.Վարչության գործունեությունը համակարգում է Մարզպետը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացնում մարզպետի Աշխատակազմի գլխավոր քարտուղարը:

9. Վարչության ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է վարչության պետը:

10 Վարչության պետը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11.Վարչության պետը պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և դրանցից բխող գործառույթների իրականացման համար:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ